«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Գեղագիտական դաստիարակության իրականացումը աշխարհագրության ուսուցման գործընթացում

ԱՌԱՐԿԱ - Աշխարհագրություն

ՀԵՂԻՆԱԿ - Նարինե Մելքոնյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - Սևանի Յա. Զարոբյանի անվան N 2 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....

ԳԼՈՒԽ 1. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....

1.1 Գեղագիտական դաստիարակության էությունը և նպատակը.....

1.2 Բնությունը որպես գեղագիտական դաստիարակության միջոց.....

1.2 Գեղագիտական դաստիարակության ձևերն ու մեթոդները աշխարհագրության ուսուցման գործընթացում.....

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....

Ներածություն

Ինչպես միշտ , այսօր էլ ժամանակի կարևորագույն խնդիրներից մեկը անհատի համակողմանի և ներդաշնակ զարգացումն է , մարդու հոգևոր պահանջմունքների ձևավորումը՝ հիմնված ազգային և վերազգային արժեքների ընկալման և յուրացման վրա:

Հայ դպրոցը թևակոխում է զարգացման մի նոր փուլ , ուր առաջնակարգ տեղ է հատկացվում խորը, ֆունդամենտալ հիմնահարցերին նոր պայմաններում հայ սովորողի՝ որպես ազատ մարդու անձնավորության ձևավորմանը , անկախ երկրի պետական մտածողությամբ օժտված քաղաքացու արժանապատիվ վարքագծի կերտման ը , նրա վերաբերմունքին ժամանակակից իրողությունների , իրականության, կյանքային արժեքների , ազգային նորովի մեկնաբանման և վերակերտման նկատմամբ, մի խոսքով՝ այն ամենին , ինչ մենք անվանում ենք հոգևոր աշխարհ:

Ուստի օրինաչափ է դառնում այն հանգամանքը , որ հանրակրթական դպրոցի վերակառուցման օբյեկտիվ անհրաժեշտությամբ թելադրված խնդիրներից մեկը սովորողների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության արդյունավետ գործընթացի կազմակերպումն ու զարգացումն է:

Այս հարցը , ինչպես միշտ , նաև մեր օրերի հրամայականը լինելով , հայրենական մանկավարժական գիտության կողմից դիտարկվել է որպես համընդհանուր դաստիարակության անքակտելի մասը :

Մարդկային գործունեության բոլոր ոլորտներն ընդգրկող և արտացոլող գեղագիտական դաստիարակությունը նպաստում է անձի բնավորության և աշխարհայեցողության ձևավորմանը , նրա կենսագործունեության այնպիսի կողմերի զարգացմանը , առանց որոնց անհրաժեշտ են մարդու հոգևոր հարստությունը , գործունեության ստեղծագործական սկիզբը , հասարակական կյանքի բոլոր , այդ թվում՝ սոցիալ –քաղաքական , տնտեսական , տեխնիկական , գիտական , մանկավարժական բնագավառներում:

Գեղագիտական կրթությունը և դաստիարակությունը՝ որպես անձի գեղագիտական զարգացման կարևոր գործոն, օգնում են անհատին՝ ոչ միայն տեսնելու , ճանաչելու , զգալու իրականությունն ըստ գեղեցիկի օրենքների ,այլև ապրելու և գործելու ըստ այդ օրենքների , լավագույնս դրսևորելու իր ստեղծագործական ներուժը , հոգևոր

հարստությունը՝ազատ , անկաշկանդ և ստեղծագործաբար: Հենց այդպիսի ստեղծագործական , համակողմանի և ներդաշնակ զարգացած անձի ձևավորման ն է ուղղված ժամանակակից հումանիստական դաստիարակությունը , որի հիմում ընկած են ազգային և համամարդկային սրբագործված արժեքները: Ահա թե ինչու , հասարակության բոլոր անդամների ,ազգի դաստիարակության հիմնահարցը ձեռք է բերում առաջնային նշանակություն և հնչեղություն:

Գեղագիտական դաստիարակության դերի անհամեմատ մեծացումը կյանքի արմատական վերակառուցման ,շուկայական հարաբերությունների հարստացման, ազգային և համամարդկային արժեքների նորովի գնահատման պայմաններում պահանջում է ուսումնասիրել և ընդհանրացնել ոչ միայն մեր հանրապետության և արտասահմանյան դպրոցների , այլև արտադպրոցական հիմնարկների աշխատանքում տասնյակ տարիներ կուտակած առաջավոր փորձը , ի հայտ բերել այդ բնագավառում առկա թերություններն ու բացթողումները և մշակել գիտականորեն հիմնավորված տեսություն և մեթոդիկա , ճշտել գործունեության կոնկրետ ուղիներն ու միջոցները այդ բնագավառում:

Հանրակրթական դպրոցում << Աշխարհագրություն >> առարկայի ուսուցման նպատակն է ապահովել սովորողների կողմից բնության և կենդանի օրգանիզմների մասին գիտելիքների կարողությունների և հմտությունների ձեռքբերումը , արժեքային համակարգի ձևավորումը , էկոլոգիական գրագիտությամբ և մշակույթով օժտված անձի դաստիարակումը , որը կգիտակցի կյանքի՝ որպես Երկիր մոլորակի բարձրագույն արժեքի նշանակությունը և կկարողանա բնության և հասարակության հետ ներդաշնակ հարաբերություններ ձևավորել՝ դրսևորելով ինքնագիտակցության բարձր աստիճան և պատասխանատվության զգացում:

Այս գործում , իհարկե, մեծ է ուսուցչի դերը: Ստորև ներկայացված մոդելում տեսնում ենք ուսուցչին առաջադրվող քայլերի հաջորդականությունը՝գեղագիտորեն դաստիարակված անձ ձևավորելու համար:

Բնագետ-ուսուցչի գեղագիտական կոմպետենտության մոդել



Հետազոտության նպատակը հանրակրթական դպրոցի աշխարհագրության ուսուցման ընթացքում գեղագիտական դաստիարակության իրականացման առանձնահատկությունների բացահայտումն է և արդյունավետ մեթոդների առաջադրումը:

ԳԼՈՒԽ 1

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Գեղագիտական դաստիարակության Էությունը եվ նպատակը

<<Մտածող և զգացող մարդ դաստիարակելու համար , անհրաժեշտ է առաջին հերթին նրան դաստիարակել գեղագիտորեն>>

Ֆրիդրիխ Շիլլեր

<<Չի կարելի ճանապարհ տալ սերնդին առանց դրականի և գեղեցիկի սաղմերի>>

Ֆեոդոր Դաստոևսկի

Գեղագիտությունը կամ էսթետիկան / հունարեն՝ aisteticos – զգայությամբ ընկալվող/ թեև որպես գիտություն ձևավորվել է միայն 18 –րդ դարում / գերմանացի փիլիսոփա Ա . Գ. Բաումգարտենի կողմից / , սակայն որպես իմացության հուզազգացմունքային և գեղեցիկի ճանաչմանն ուղղված ոլորտ գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում: Մարդը մշտապես ունեցել է գեղեցիկի պահանջը , գեղեցիկը կազմել է նրա հոգևոր կյանքի անքակտելի մասը : Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է նաև իրականության կարևորագույն , ամենահետաքրքիր ու զարմանալի երևույթներից մեկը, որի ճանաչումը, իմացությունը եղել է մարդկային գործունեության /ճանաչողության/ հիմնական նպատակներից մեկը: Եվ , բնականաբար , գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ:

Գեղեցիկը ճանաչելու , հասկանալու , զգալու , ինչպես նաև գեղագիտական այլ ունակությունների նախադրյալները մարդուն տրվում է ժառանգաբար : Բայց դրանց ձևավորումը և զարգացումը հիմնականում իրականացվում սոցիալական ամենատարբեր օղակներում , որոնց մեջ կարևորագույնը թերևս , հանրակրթությունն է՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով:

Իսկ ի՞նչ է գեղագիտական դաստիարակությունը :

Այստեղ բացակայում է միասնական մոտեցումը , և տարբեր հեղինակների կողմից այն բնորոշվում է տարբեր կերպ . որպես իրականության նկատմամբ մարդու

գեղագիտական հարաբերության ձևավորման նպատակաուղղված գործընթաց , որպես շրջակա աշխարհի գեղագիտական ընկալման և գեղեցիկի ստեղծման ունակությունների զարգացման , որպես իրականության նկատմամբ մարդու որոշակի գեղագիտական հարաբերությունների ձևավորման որպես անձի հուզազգացմունքային և արժեքային գիտակցության և դրան համապատասխան գործունեության ձևավորման գործընթաց և այլն: Նկատվող այս անհստակության , ոչ միասնական մոտեցման հիմնական պատճառները երկուսն են՝ անհստակությունը և ոչ միասնական մոտեցումը ինչպես գեղեցիկի , այնպես էլ դաստիարակության բնորոշման հարցերում:

Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է : Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է : Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը , ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները ճաշակը, իդալը , գեղեցիկը գնահատելու կարողությունը , ապահովում գեղագիտական ունակությունների , կարողությունների , հմտությունների և այլ որակների զարգացումը , ակտիվացնում , ընդլայնում և բավարարում է գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկը ընկալելու և ստեղծագործելու հնարավորությունները:Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն , զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները :

Գեղագիտական դաստիարակությունը իրականացնում է երկու հիմնական գործառույթ.

- այն ձևավորում է սովորողի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը
- զարգացնում է նրա գեղագիտական և ստեղծագործական ներուժը:

Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է : Մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը : Այս տեսակետից դաստիարակության գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար:

Ընդհանրապես , գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է , ավելին ինչ-որ իմաստով միահյուսվում է ինչպես բարոյական դաստիարակության , այնպես էլ ինտելեկտուալ զարգացման հետ : Այդ կապերին դեռևս հինգերորդ դարում անդրադարձել է հայ պատմիչ և փիլիսոփա Եզնիկ Կողբացին , ով գտնում է , որ մարդու ստեղծած գեղեցիկը պետք է ծառայի : Գեղեցիկի և բարու

փոխհարաբերությունները և համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները եղել են բոլոր ժամանակների հետազոտողների ուշադրության կենտրոնում : Որոշ հետազոտողներ հակված են գեղագիտական դաստիարակությունը ներառել բարոյական դաստիարակության մեջ: Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական , բարոյական ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը:

Գեղագիտական կրթությանը և դաստիարակությանը համալիր մոտեցման բազմակողմանի , բարդ և ստեղծագործական աշխատանքի իրականացման համար ուսուցիչ – դաստիարակը պետք է օժտված լինի անձնական և մասնագիտական այնպիսի հատկանիշներով , ինչպիսիք են՝

- արտաքին կուլտուրայի և վարվելաձևի էսթետիկան
- խոսքի կուլտուրան , արտահայտչականությունը, հուզականությունը
- շփման կուլտուրան
- գեղարվեստական և գեղագիտական բարձր ճաշակը
- զարգացած գեղագիտական իդալը
- գեղագիտական գիտելիքների , համոզմունքների և վարվելաձևի միասնությունը

Գեղագիտական դաստիարակությունն աճող սերնդի բազմակողմանի զարգացման մասն է կազմում : Դրա մեջ իր ենց տեղն ունեն գեղարվեստն , թատրոնն ու կինոն , նկարչությունը , ճարտարապետությունը և այլն : Այս բոլոր բնագավառները ունեն իրենց փիլիսոփայական հիմքը և տեսությունները : Այս առումով , պետք է ընդգծել , որ գեղագիտական դաստիարակությունը ունի իր տեսությունները և մեթոդները :

Ցանկացած արվեստ պետք է հասկանալի լինի յուրաքանչյուր , առավել ևս երեխաների համար: Վերջիններիս հայացքները ձևավորվում են ուսանելու ընթացքում: Անհրաժեշտ է , որ նրանք ի վիճակի լինեն հասկանալու գեղեցկության իմաստը : Իսկ դրա համար պետք է ուսումնասիրել արվեստ իր բազմազանության մեջ :

Մանկավարժները պետք է տիրապետեն գեղագիտորեն հագեցված խոսքին և բոլոր մանկավարժական հիմնախնդիրների շարքում առանձնահատուկ տեղ հատկացնեն գեղագիտական դաստիարակությանը: Դեռ նախադպրոցական տարիքից, անհրաժեշտ է երեխաներին ծանոթացնել բնության գեղեցկությանը ,

մարդկային վարք ին ու բարքին , գեղարվեստական այն գործերին , որոնք պարզ և հասկանալի կլինեն երեխաների համար :

1.2 Բնությունը որպես գեղագիտական դաստիարակության միջոց

Գեղագիտական դաստիարակության գործում անգնահատելի է բնության դերը: Այն ցայտուն երևում է աշխարհագրության ուսուցման գործընթացում : Բնությունը գեղեցկության իսկական աղբյուրն է : ՈՒՇինսկին ասում էր , որ երիտասարդ մարդու հոգու վրա ունեցած բնության ազդեցության ուժի հետ մանկավարժն անգամ չի կարող մրցել :Բնությունը ներգործում է աշակերտների հոգու վրա , ազնվացնում նրանց զգացմունքները , ձևավորում նրանց հոգևոր կերպարը:Այն օգնում է զարգացնելու նրանց գեղագիտական զգացմունքները , դիտողականությունն ու երևակայությունը , ուշադրությունն ու ունակությունները:

Աշակերտը իր ճանաչողության գործընթացում հետզհետե բացահայտում է իրեն շրջապատող աշխարհը , և նրա առջև բացվում է բնության գեղեցկությունները: Գեղեցիկը նկատելով կարողության ձևավորմանը զուգընթաց հարկավոր է երեխաներին սովորացնել բնության մեջ ներդաշնակության խորհուրդն ըմբռնելու արվեստը և ձգտում առաջացնել չխաթարելու այն:

Շրջապատող աշխարհում արվեստի ստեղծագործություններում գեղեցիկը նկարելու և ընկալելու կարողությանը կարևոր նախապայման է մարդու հոգևոր աշխարհի ձևավորման և զարգացման համար : Հայտնի է , որ անհնար է երեխային կրթել ու դաստիարակել առանց նրա մեջ գեղեցիկի զգացողության ձևավորման. նա հրճվում է բնության գեղեցկությամբ և իր համար հայտնաբերում գեղեցիկը:

Մեզանից յուրաքանչյուրը սիրում է մաքուր , անուշ օդ շնչել անտառում , զբոսնել կանաչ բացատում :Բայց դա է արդյոք սերը բնության հանդեպ : Բնության նկատմամբ երախտագիտության զգացումը , ջերմացած ներքին բարի մասնակցությամբ , ձեռք է բերում մարդու մեջ գեղագիտական երանգավորում : Շրջակա բնության հանդեպ վերաբերմունքի միջոցով մարդն ընկալում է իրեն՝ որպես նրա անբաժանելի էություն :

Մարտիրոս Սարյանի բնապատկերները շաղախված են հայրենի եզերքի հանդեպ անխարդախ ջերմությամբ , անսահման սիրով , վառ ու կենդանի վերարտադրում են հարազատ բնաշխարհի գունային ողջ համապատկերը , ստիպում են խորհել ու ոգևորվել: Բնությունը շատ բան է տալիս , բայց փոխարենը ուշադրություն , սեր , խնամք

է խնդրում , ինչը ուսուցչին հարկադրում է բացառիկ ուշադրությամբ և տակտով սովորողներին հասու դարձնել բնության հրաշալիքների հարստացման կարևորությանը :

Բնության հետ հաղորդակցությունը , զգալու , հասկանալու , գնահատելու կարողությունը սովորողի մեջ արթնացնում են իմանալու , մտածելու ցանկություն,սրում են գեղագիտական զգայնությունը , հպարտության զգացմունք առաջացնում մարդկանց ստեղծագործական կյանքի համար, որոնք չխախտելով բնության հավասարակշռությունը , լիովին բացահայտում են կյանքի ուժերը :

Բնության հետ շփվելու համար պահանջվում է անհրաժեշտ ժամանակ , ցանկություն և համապատասխան պայմաններ :Ցանկության և կյանքը խելացի կազմակերպելու դեպքում կարելի է գտնել բնությամբ զբաղվելու ժամանակ: Արժե կատարել ժամանակի նման զոհողություն , քանի որ բնությունը մարդուն ոչ միայն պարգևում է լուսավոր բերկրանք ,այլև վերականգնում է նրա հոգեկան հավասարակշռությունը , առույգությունը և ուժը:

Ինչ վերաբերվում է բնությունը դիտելու ցանկությանը , ապա դրա համար անհրաժեշտ է իր մեջ զարթնեցնել այդպիսի ցանկություն : Այդ է գեղագիտական դաստիարակության ամենամեծ դժվարությունը: Այն մարդը , որն արդեն մի քանի անգամ զգացել է գեղեցիկի պահանջը , ինքը կորոնի դեպի այդ գեղեցիկը տանող ուղիները:

Անհրաժեշտ է վերականգնել մեր ժողովրդի այն հրաշալի ավանդները , որի համար անցյալում բնությունը եղել է գեղագիտական հիացմունքի ամենամատչելի մասայական միջոցը և որը դարերի ընթացքում ստեղծել է բնությունն ընկալելու և փառաբանելու բարձր կուլտուրա: Հայ ժողովրդական բանահյուսությունը և առանձնապես <<Սասունցի Դավիթ>> էպոսի գեղարվեստական պատկերները վկայում են բնությանը հիանալիորեն զգացող և հասկացող մեր ժողովրդի վառ և հարուստ երևակայության մասին :

Բնությունը դաստիարակում է հույզեր , զգացմունքներ , ճաշակ՝ բնապատկերներով, ռելիեֆի վիթխարի գծագրումներով , ինչպես և մարդու գեղակերտումներով:Այդ բոլորի մեջ միահյուսվել են բնության գեղեցկության և մարդու ստեղծագործական աշխատանքի արդյունքները:

Բնության գեղագիտական ընկալումը նպաստում է սովորողների մտավոր զարգացմանը : Ինչպես հայտնի է , բնությունը եղել է մարդու մեծագույն դասագիրքը բոլոր ժամանակներում : Նա մարդուն հաղորդել և հաղորդում է գիտելիքներ ազգագրության , կենսաբանության , օդերևույթաբանության , աշխարհագրության , հայրենագիտության վերաբերյալ :Դպրոցականները բնության հետ առավել շփման մեջ են մտնում կենսաբանության , աշխարհագրության և բնագիտության դասերի միջոցով:

Բնության գեղեցկությունները ծնում և սնում է մեր սերը հայրենիքի նկատմամբ: Հայրենիքի նկատմամբ տածած գեղեցիկ և վեհ զգացմունքները անբաժանելի են նրա բնաշխարհից , որի պատկերները ապրում են մեր սրտերում:

Կենդանի և անկենդան բնությունը գոյատևում և զարգանում է բարդ օրենքներով: Երեխան իր ճանաչողության գործընթացում հետզհետե բացահայտում է դրանք : Հենց այդ ընթացքում էլ նրա առջև բացվում են բնության գեղեցկությունները: Նա զննում է հմայիչ բնապատկերները , արևածագն ու մայրամուտը , աստղալից երկինքը , տարվա տարբեր եղանակների գուներանգները , բուսական ու կենդանական աշխարհի փոփոխությունները և այլն :

Եվ այսպես , գեղագիտական դաստիարակությունը բարձր պահանջներ է ներկայացնում բնության նկատմամբ մարդու վարվելաձևի կուլտուրային :

1.3 Գեղագիտական դաստիարակության ձևերն ու մեթոդները աշխարհագրության ուսուցման գործընթացում

Գեղագիտական դաստիարակության ձևերն ու մեթոդներն ընտրվում են առաջադրված նպատակներին և խնդիրներին համապատասխան Աշխարհագրության դասերը բացի գիտական նպատակներից , ունեն նաև դաստիարակչական նշանակություն : Դրանք աշակերտության հոգեբանությունը կարող են հարստացնել բարոյական և գեղագիտական գիտելիքներով : Կարևոր նշանակություն ունեն արտադասարանային շրջապտույտները գեղատեսիլ վայրերով , այցելությունները թանգարաններ: Իր հերթին աշխատանքը բնության գրկում նպաստում է բնության ընկալմանը և գնահատմանը :Աշակերտների ուշադրությունը դարձնելով հայրենի բնության անձեռակերտ հուշարձաններին նրանց մեջ ստեղծում է գեղեցիկը , հրաշալին , լավը տեսնելու , հասկանալու , գնահատելու կարողություն: Մեծերից ոմանք ասում են , որ բոլորն են նայում , բայց ոչ բոլորն են տեսնում , այսինքն ուսուցչի հմտությունն այն է , որ սովորողների շրջանում հասուն դարձնի տեսնելու հնարավորությունները:

Աշակերտների գեղագիտական արժեքների ձևավորման և զարգացմանը նպաստում են էքսկուրսիաները : Էքսկուրսիայի ժամանակ ուսուցիչն ու աշակերտը թողնում են դասասենյակը և դուրս են գալիս ազատ բնություն : Խախտվում է դասի սովորական ընթացքը , փոխվում է դասի թե տեղը և թե անցկացման ձևը : Այս բոլոր փոփոխությունները միանգամայն դրական ազդեցություն են ունենում ինչպես հաղորդվող նյութի կայուն յուրացման , այնպես էլ աշակերտների գեղագիտական ճաշակի ձևավորման վրա: Էքսկուրսիան ուսուցչին հնարավորություն է տալիս կոնկրետ փաստերի վրա աշակերտներին բացատրել ու ցույց տալ բնության բազմաթիվ առարկաների և երևույթների միջև եղած փոփադարձ կապերը , պատճառի և հետևանքի արդյունքները : Բնությունը իր բազմապիսի առարկաներով ու երևույթներով , իր պես- պես գույներով ու ձայներով , դրանց միջև եղած պատճառահետևանքային զանազան կապերով , իր սքանչելի գեղեցկությամբ ու

անկրկնելի ստեղծագործություններով , ամենամեծ ուսուցիչն է , ուսուցիչ , որը ամենից հեշտ ու դյուրին ձևով , կայուն ու խորը կերպով է սովորեցնում իրեն ճանաչել: Լինելով բնության գրկում աշակերտը փորձում է ինքնուրույն ուսումնասիրել տարբեր երևույթներ իրեն զգալով որպես բնական աշխարհը պեղող փոքրիկ <<փորձագետ>>:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն աշակերտների բառապաշարի հարստացման գործում, որովհետև դեպի բնություն ու արտադրություն կատարված էքսկուրսիաների ժամանակ նրանք ոչ միայն նոր գիտելիքներ ու հասկացություններ են յուրացնում , այլև բազմաթիվ նոր բառեր ու բառակապակցություններ են սովորում , որոնք հարստացնում են բառապաշարը և բարձրացնում խոսքի կուլտուրան :

Աշակերտների մոտ դիտելը , զննելը , տեսնելը վարժեցնում են նրանց զգայարանները, իսկ զգայարանը այն դուռն է , որով արտաքինը մտնում է , թափանցում է նրա ներաշխարհը : Ինչը որ չի անցնում զգայարաններով , նա առհասարակ հոգեկան աշխարը չի մտնում , գաղափար չի դառնում , ուստի ուսուցման գործընթացում նախ պետք է հանդես գա գաղափար ը , իսկ հետո `բառը, խոսքը: Բոլորին է հայտնի , որ աշակերտները իրենց մտքերն առավել գեղեցիկ խոսքի են վերածում էքսկուրսիայից հետո , որովհետև նյութի կոնկրետությունը , տպավորությունների անմիջականությունն ու հզոր ուժը այդպիսի հնարավորություն են տալիս :

Գեղագիտական դաստիարակության մեթոդներց է գործնական աշխատանքների կազմակերպումը : Դիագրամների , ուրվագծային քարտեզների կազմումն ու լրացումը աշակերտներից պահանջում է ոչ միայն ճշգրտություն , այլև աշխատանքը գեղարվեստորեն կատարելու հմտություններ :Անտարակույս , գեղարվեստական դաստիարակության հարուստ աղբյուր են գեղարվեստական ֆիլմերը , տեսաֆիլմերը, բնապատկերները , գեղեցիկ ձևավորված արտադրատեսակները , գովազդները :

Աշխարհագրություն դասավանդելիս օգտագործվում են շատ նոր մանկավարժական տեխնոլոգիաներ , բայց ոչ միայն կրթական , ստեղծագործական նշանակություն ունեն , այլ նաև գեղագիտական : Այդ քայլերից է նաև արտագնա դաս թանգարանում : Թանգարանում անցկացված արտագնա դասի նորարարությունը կայանում է դասվանդման նկատմամբ միաժամանակ համալիր , ինտեգրված ինտերակտիվ մոտեցումներում: Նման դասերը հնարավորություն են տալիս հստակեցնել

ուսումնասիրվող նյութի կարևորությունը , գործնականությունը , դժվար նյութը տրամադրել պարզ նյութերի միջոցով բարձրացնել աշակերտների զգացմունքային և մտավոր մակարդակը : Թանգարանում անցկացված արտագնա դասերը բացի ճանաչողական - գեղագիտական կարևորությունից , ծառայում են նաև աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը :

Գեղագիտական դաստիարակության խորացման և ձևավորման վրա կիրառելի մեթոդներից է կինոֆիլմերի դիտումը , որի ժամանակ բնության ուսումնասիրվող օբյեկտը կամ երևույթը բարձրացնում է գեղագիտակաբ ճաշակը: Այսպես օրինակ , արևադարձային անապատների բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրման ժամանակ դիտելիս ինչի վրա պետք է կենտրոնացնել ուշադրությունը , այլ նաև ձևավորել գեղագիտական ճաշակ, գեղեցիկը տեսնելուն և ճանաչելուն:

Գեղագիտական դաստիարակության հարցում որպես զորեղ գրգռիչ հանդես է գալիս ուսուցչի խոսքը : Հայտնի է , որ գրգռիչները 3 են տեսողական , լսողական և արտաբերական : Դրանք ազդում են մարդու մտածողության , զգացմունքների և հիշողության վրա : ՈՒսուցիչը պետք է տիրապետի գեղեցիկ , արտահայտիչ խոսքին , որը կարող է անջնջելի տպավորություն թողնել աշակերտի մտածողության , համոզմունքի , վարքագծի վրա : Նա պետք է կարողանա պատմի բնության , մարդկանց հարաբերությունների , հայրենիքի և այլ կարևոր հարցերի մասին այնպես , որ ամեն մի աշակերտ հասկանա իր ուսուցչին , կարողանա գնահատել նրա խոսքը , զգա կյանքի, երկրի , հայրենիքի գեղեցկությունը : ՈՒսուցչի խոսքն արտահայտիչ են դարձնում աշխարհագրական գրականության մեջ հաստատուն տեղ գտած թևավոր արտահայտությունները , ասույթները , աֆորիզմները , ինչպիսիք են <<Քարտեզը աշխարհագրության ալֆան և օմեգան է >>, <<Կոլոմբոսյան ձու >> , <<Արևի տակ տեղ ունենալ >>, <<Արևելքի Ջիբրալթար>>, <<Եգիպտոսը Նեղոսի պարգևն է >> և այլն :

Լսելով ուսուցչին աշակերտները պետք է պարզ պատկերացում ստանան այն օբյեկտների և երևույթների վերաբերյալ , որոնց մասին ուսուցիչը պատմում է: ՈՒստի ուսուցիչը պետք է պատմի հրապուրիչ , գրավի աշակերտների ուշադրությունը, նրանց մեջ հետաքրքրություն առաջացնի աշխարհագրության նկատմամբ : Որպեսզի պատմելը պատկերավոր, հուզիչ , գրավիչ լինի , ուսուցիչը չպետք է սահմանափակվի միայն դասագրքի բովանդակությունը շարադրելով , նա պետք է փնտրի ու գտնի տվյալ թեմային վերաբերող բազմաթիվ տպավորիչ պատմությ ուններ ու

նկարագրություններ : Օրինակ երբ ուսուցիչը ցանկանում է ներկայացնել տարվա եղանակները կամ բնության պատկերները , նա պարտավոր է նախօրոք ձեռքի տակ ունենալ տվյալ դասին վերաբերվող տպավորիչ բանաստեղծություններ և կարողանա տպավորիչ կարդալ , որ սովորողները ոչ միայն ճիշտ ընկալեն նկարագրված երևույթը և գեղարվեստական հաճույք ստանան , այլ զգան դրանց հմայքն ու գեղեցկությունը: Աշխարհագրության դասագրքում նկարագրած Սևանին վերաբերող թերևս այնքան վառ պատկերներ չկան , որքան Հ. Հայրապետյանի << Երգ Սևանի մասին>> բանաստեղծության տողերում

Բազմած մեր սեգ լեռների մեջ

Աչքդ հառած երկնքին

Ժպտում ես դու , ականջ դնում

Ալիքների զիլ երգին:

Աշխարհագրության դպրոցական դասընթացն իր բովանդակությամբ և բնույթով ունի հայրենագիտական ուղղվածություն ; Ուսուցման այս եղանակում էլ արտահայտվում է աշխարհագրության հայրենագիտական ուղղվածությունը: Աշակերտներին հայրենագիտական գիտելիքներով զինելը նպատակ ունի նրանց մեջ զարգացնել աշխարհը նյութական տեսնելու , ընդլայնելու նրա աշխարհաճանաչողական պատկերացումները մշակելու ճաշակ և հոգատար վերաբերմունք բնության , նրա հարստությունների և գեղեցկությունների պահպանման նկատմամբ:

Հայրենագիտական աշխատանքները նպաստում են գեղագիտական , աշխատանքային ու ֆիզիկական դաստիարակմանը:

Աշխատանքը հայրենի բնության գրկում՝ անտառում , քչքչացող գետակի ափին , բաց դաշտում , այգիներում , խորհրդավոր քարանձավում,ամրապնդում են աշակերտների առողջությունը , բնավորությունը : Բնության գրկում հայրենագիտական աշխատանքներ կատարելիս աշակերտները ստանում են նաև գեղագիտական դաստիարակություն , որովհետև գեղեցիկը բնության մեջ գոյություն ունի օբյեկտիվորեն :Այն կապված է առարկաների և երևույթների բնական հատկությունների հետ և արտահայտվում է գույների , ձայների ու ձևերի մեջ , որը օբյեկտիվորեն փոխանցվում է մարդկանց:

Հայրենագիտական աշխատանքների ընթացքում աշակերտների ուշադրությունը պետք է կենտրոնացնել հայրենի բնության հիասքանչ տեսարանների՝ վեհանիստ ու ժայռոտ լեռների, անդնդախոր ձորերի ու կիրճերի, բնակերտ քարանձավների, գեղատեսիլ գետահովիտների, սարալանջերից բխող աղբյուրների վրա, նրանց մեջ ստեղծել լավը, գեղեցիկը տեսնելու, հավանելու, արժեքավորելու կարողություն: Սակայն ոչ բոլոր դպրոցականներն են կարողանում զգալ և գեղագիտական հաճույք ստանալ բնության տեսարաններից: Նրանք բոլորը դա կզգան, կդիտեն, կտեսնեն, կհասկանան ու կհիանան այն դեպքում, երբ ուսուցիչը այդ բոլորին իր կենդանի խոսքով շունչ ու կենդանություն է հաղորդում, ճշմարտացիորեն նկարագրում դրանք:

Հայրենագիտական աշխատանքների միջոցով ուսուցիչը բացահայտում է բնության բազմաթիվ երևույթների ընդհանուր օրենքներն ու օրինաչափությունները, որոնց միջոցով աշակերտներն առավել խորությամբ են թափանցում բնության բարդ բացատրելի երևույթները հասկանալու մեջ, դառնում են առավել ուժեղ, հզոր, անվախ:

Բնության ահեղ ու խուլ տարերքը

Ճնշել է մարդուն ուժով իր վայրի,

Ու մարդն անընդմեջ փնտրել է ելքը

Հավերժող խաղում լույս ու խավարի:

Մարդը իսկապես ճանաչելով բնության օրենքներն ու օրինաչափությունները, աստիճանաբար ազատագրվեց նրա իշխանությունից և սովորեց այդ ահեղ երևույթների մեջ ճանաչել գեղեցիկը, հիանալ ու հարստանալ դրանցով:

Դպրոցականների գեղագիտական պահանջմունքների ձևավորմանն ու բավարարմանը մեծապես նպաստում են նաև միջառարկայական կապերը: Ուշինսկին իրավացիորեն գտնում էր, որ ամեն մի գիտության մեջ, մեն մի ուսումնական առարկայի մեջ <<առկա է գեղագիտական տարր, որը աշակերտին պետք է մատուցի ուսուցիչը>>:

Սովորողների գեղագիտական դաստիարակության գործում իր պատկառելի դերն ունի գրականությունը: Գրքերի միջոցով սովորողները << ճամփորդում են>> Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի, Հ.Շիրազի, Պ. Սևակի աշխարհում: Մեր բնաշխարհի անկրկնելի երգիչ Վախթանգ Անանյանի որսորդական պատմվածքներում սովորողների առջև բացվում են հայրենի բնության խորհրդավոր գաղտնիքները: Այսպես կարդալով Վ. Անանյանի <<Սևանի ափին >> վեպը՝ երեխաները կարող են

իմանալ Սևանա լճի , այնտեղ ապրող ձկների , նրա շրջապատի բնության մասին : Սովորողները աշխարհագրության ժամերին գրականության միջոցով սովորում են ոչ միայն տեսնել , այլ մտորել , զգալ հայրենի բնաշխարհի գեղեցկությունը , հարստացնել իրենց հոգեկանը , ներաշխարհը : Հիշատակման արժանի է հայ մեծ վիպասան Ռաֆֆու <<Սամվել>> վեպից <<Արարատյան դաշտի առավոտը>> գեղարվեստական պատկերը:

Նույն զգացողությունը պարուրում է սովորողին , երբ նա ուսուցչի խորհրդով ընթերցում է Ա. Բակունցի <<Միրհավը >> պատմվածքի սկիզբը / աշնան նկարագրությունը / , Թումանյանի , Իսահակյանի , Սահյանի բնապատկերները : Բնության մարդկային փոխհարաբերությունների վերարտադրությունը կինոարվեստի միջոցով սովորողների գեղագիտական դաստիարակության միջոց է:Ուսուցիչը պետք է ոգևորի և մանկավարժական ներգործությամբ նպաստի սովորողների ավելի խորը և հուզական զգացողության զարգացմանը , օգնեն նրանց խորանալու բնության տարբեր երևույթների միջոցով գեղագիտական վերլուծությունների մեջ:

Այդ տեսակետից սովորողի համար ուշագրավ խորհրդածությունների լավագույն առիթն են դառնում հայ կինոարվեստի վերջին տասնամյակների լավագույն գործերը ՝ <<Նահապետ>>, <<Մենք ենք , մեր սարերը >>, <<Նռան գույնը >>, որոնցում բնապատկերը , խոսքը , երաժշտությունը , նկարչական աշխատանքը սովորողին սուզում են կենդանի կյանքի և խորհրդանիշների աշխարհը:

Որպես գեղագիտական նպատակների ծառայող խաղատեսակներ կարելի է առանձնացնել համակարգչային տարբեր ուսուցողական ,արվեստին և գեղագիտականին առնչվող խաղերը և դրանց տեսակները : Համակարգիչը ներթափանցել է գեղագիտական բնագավառներ հարստացնելով և նոր հնարավորություններ ընձեռելով դրանց զարգացմանը : Կարելի է համարձակորեն պնդել , որ այսօր համակարգչային գրաֆիկան հանդիսանում է նշանակալի գործոն ժամանակակից գեղագիտական միջավայրում : Համակարգիչը կարելի է կիրառել ինչպես ստեղծագործական նկատառումներով , այնպես էլ դաստիարակիչ: Սովորողների գեղագիտական մտածողության և ընդհանուր գեղագիտական զարգացման խնդիրներին մանկավարժական լուծում տալու տեսանկյունից օգտակար կարող են լինել համակարգչային CD_ROM սկավառակները: Գեղագիտական բովանդակություն պարունակող համակարգչային սկավառակները կարող են լինել հանրագիտարանային բնույթի , վիրտուալ էքսկուրսիաներ պարունակող , խաղային և այլն:

Այսպիսով, ամփոփելով ուսումնասիրության արդյունքները , կարող ենք փաստել,որ անգնահատելի է գեղագիտական դաստիարակության դերն ու նշանակությունը մարդու աշխարհայացքի ձևավորման , նրա համակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում: Ուսումնական առարկաների բազմաբնույթ միասնացումը, այսինքն՝ ճանաչողության ամբողջականության պահպանումը, ուսուցման արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոն է և ուսուցման արդիական նպատակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ազգային դպրոցի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության,պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է , նրանց պատշաճ վարքի ու վարվելակերպի ձևավորումը:Գեղագիտական դաստիարակությունն աճող սերնդի համակողմանի զարգացման մասն է կազմում:Չի կարելի պատկերացնել աշակերտների մտավոր դաստիարակությունն առանց ուսումնասիրվող երևույթների գեղեցկության բացահայտման:

Ասպիսով, հանրակրթական դպրոցում գեղագիտական դաստիարակության իրականացման հիմնախնդիրը պետք է դառնա դասապրոցեսի կարևոր բաղկացուցիչ մասը , քանի որ հենց դպրոցական տարիքն է ամենաորոշիչը գեղագիտական դաստիարակութան համար: Այս տարիքում է ձևավորվում երեխայի աշխարհ ընկալումը,որն աստիճանաբար կերտում է անհատը: Անգնահատելի է գեղագիտական դաստիարակության դերն ու նշանակությունը մարդու աշխարհայացքի ձևավորման , նրա համակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում:

Այս գործում ոչ պակաս կարևորություն ունի Աշխարհագրությունը՝աշխարհի մասին գիտությունը:Հենց աշխարհագրական երևույթների մասին գիտություն լինելն ինքնին պարտավորեցնում է առավել խորը ու նպատակային մոտեցում ցուցաբերել գեղագիտական դաստիարակության մեթոդների կիրառությանըաշխարհագրության դասաժամերին: Բնության, կյանքի ծագման,բնական երևույթների , բուսական ու կենդանական աշխարհի ուսումնասիրությունը անհրաժեշտ է զուգակցել գեղարվեստական ստեղծագործությունների, քնարական բանաստեղծությունների, երաժշտության, կերպարվեստի,փիլիսոփայության ու հոգեբանության հետ:

Ուսուցիչը պետք է սովորողների մեջ ոչ միայն ձևավորի գեղեցիկը զգալու, հասկանալու ունակություններ,այլև դաստիարակի այն ստեղծելու ու սերունդներին

փոխանցելու պահանջներ, կարողություններ և հնարավորություններ: Աշխարհագրության մեջ սա արտահայտվում է աշակերտների մեջ բնության հանդեպ հոգատարության և սիրո ձևավորման, պահպանման, բնության անգնահատելի դերի գիտակցման ու արժևորման սերմանումով:Աշակերտները պետք է գիտակցեն,որ բնության մաքրությունը պահպանելով , նոր ծառեր տնկելով , մշակելով, ոչ միայն էկոլոգիական հիմնահարցերին են լուծում տալիս, այլև կերտում սեփական տեսակն ու բնավորությունը, բարոյական գծերը,հասարակության համար պիտանի մարդ լինելը:

Վերոնշյալ խնդիրների լուծման, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

Դասապրոցեսի ընթացքում ստեղծել միջառարկայական կապ մյուս առարկաների հետ/ գրականություն , կերպարվեստ, երաժշտություն/:

Առավել շատ դասեր անցկացնել բնության գրկում, օգտագործել բնության ընձեռած բոլոր հնարավորությունները, կազմակերպել էքսկուրսիաներ, զբոսանքներ:

Թվարկած բոլոր մոտեցումները կարևոր են անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումն ապահովելու, բարոյական, հայրենասիրական , գեղագիտական դաստիարակություն իրականացնելու գործում:

Գեղագիտական դաստիարակությունը երկարատև, բարդ և բազմակողմանի գործընթաց է: Նրա ձևերն ու մեթոդները բազմաբնույթ են և միայն բոլոր ձևերի ամբողջական կիրառման շնորհիվ կարելի է հասնել գեղագիտական դաստիարակության բարձր մակարդակի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու . Մանկավարժություն/ուսումնական ձեռնարկ/, Երևան, 2005:

2. Բալյան Ա. Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը , <<Լույս>> հրատարակչություն , Երևան , 1979:

3. Մկրտչյան Կ. Գեղագիտական դաստիարակություն կրթություն /ուսումնական ձեռնարկ/ Երևան 1997

4. Հակոբյան Ա. Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները

կրտսեր դպրոցում, Մանկավարժական միտք, Երևան, 2013,3-4

5. Սողոմոնյան Լ. Կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության իրականացումը մանկավարժական գործընթացում, Երևան , 2010թ.:

6. Ներսիսյան Լ. Ս. Կրթություն և գեղագիտություն , Զանգակ-97 հրատ ., Երևան ,2002

7. Գիտամեթոդական վերլուծական ամսագիր <<Մանկավարժություն>>, Երևան , ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, 2005, 2012, 2015